



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

„ 27,, օգոստոսի 2013թ.

N 100

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆԻՆ  
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-րդ, 164-րդ, 169-րդ հոդվածների և 2011թ. „Պետական բյուջեի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 01 բաժի 01 խմբի 01 դասի 03 ծրագրի „Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ,, հոդվածի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997թ նոյեմբերի 5-ի „Մշտական հիմունքներով պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքներ կատարող քաղաքացիների և այդպիսի գաղտնիքի պաշտպանության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողներին հատկացվող արտոնությունների մասին,, N487 որոշման 1-ի կետի բ) ենթակետով՝

կարգադրում եմ.

1. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սևակ Խլղաթյանին ս/թ սեպտեմբերի 2-ից, 29 աշխատանքային օր տևողությամբ տալ 2013թ. հերթական արձակուրդը:

2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես դնել աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ալբերտ Աղեկյանի վրա:

3. Մարզպետարանի աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

4. Աշխատանքի մեջ համարել 2013թ հոկտեմբերի 11-ին:

5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

 Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ